

Հաստատված է «Ակտինա Կապիտալ»
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
միակ մասնակցի թիվ Ռ-25-001 որոշմամբ

Տնօրեն՝ Տիգրան Դավթյան

12 մայիսի 2025թ

**«ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ**

**ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ**

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2025

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Ակտինա Կապիտալ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ **«Ընկերություն»**) հաճախորդների դասակարգման և տեղեկատվության փոխանակման կանոնակարգը (այսուհետ՝ **«Կանոնակարգ»**) մշակված է Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության, մասնավորապես «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին (այսուհետ՝ **«Օրենք»**), դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ) կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը համապատասխան:

1.2. Սույն Կանոնակարգը կարգավորում է Ընկերության հաճախորդների դասակարգման պատշաճ գործընթացի իրականացումը, սահմանված դասակարգման չափանիշների պահպանումը, ինչպես նաև ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման շրջանակներում տրամադրվող և ստացվող տեղեկատվության փոխանակման գործընթացը:

1.3. Կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

«Ներդրումային ծառայություններ». Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ծառայությունները,

«Ոչ հիմնական ծառայություններ». Օրենքի 26-րդ հոդվածով սահմանված ծառայությունները,

«Հաճախորդ». անձ, որը օգտվում է Ընկերության կողմից մատուցվող ծառայություններից, **«Պայմանագիր»**. ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում Հաճախորդի և Ընկերության միջև կնքված փաստաթուղթ, որում ներառվում են տվյալ անձի արժեթղթերով և դրամական միջոցներով գործարքի կնքման և կատարման հետ կապված կողմերի իրավունքներն ու պարտականությունները,

«Տեղեկատվության փոխանցման հուսալի միջոց». ցանկացած միջոց, որը Հաճախորդին հնարավորություն է տալիս ստանալ և պահպանել անձնապես իրեն ուղղված տեղեկատվությունը, և որը հետագայում հնարավորություն կտա այն լիարժեք օգտագործել և պահպանված տեղեկատվությունը վերարտադրել,

«Կանոնակարգ 4/07». ՀՀ ԿԲ կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտ, այն է՝ «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07,

«Պրոֆեսիոնալ հաճախորդ». հաճախորդ, որն ունի համապատասխան փորձ և գիտելիք ինքնուրույն ներդրումային որոշումներ իրականացնելու և դրանցից բխող ռիսկերը գնահատելու համար և որը համապատասխանում է Կանոնակարգ 4/07-ի 3.1 գլխով

սահմանված չափանիշներին:

«Սակագներ». Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Բրոքերային ծառայությունների մատուցման սակագներ և/կամ Հաճախորդի հետ համաձայնեցված հատուկ սակագներ՝ առկայության դեպքում:

«Ծառայություններ». Ընկերության Սակագներով նախատեսված ծառայություններ:

«Իմ հաշիվը մոդուլ». «ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ վեբկայքի «Իմ հաշիվը» մոդուլ, որի միջոցով իրականացվում են Պատվերների ներկայացումն ու կատարումը, հաշվետվությունների և /կամ Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերների, կատարված գործարքների և այլ տեղեկատվության ներկայացումը, ինչպես նաև Հաճախորդի և Ընկերության միջև հաղորդակցումն ու հաղորդագրությունների/տեղեկատվության փոխանակումը:

1.4. Սույն Կանոնակարգում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օրենքով և Կանոնակարգ 4/07-ով սահմանված նշանակությունը:

1.5. Ընկերության կողմից ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման շրջանակներում տեղեկատվության փոխանակումը և Հաճախորդների դասակարգումը կարգավորվում է սույն Կանոնակարգով, եթե այլ բան սահմանված չէ տվյալ ծառայության մատուցման պայմանները սահմանող Ընկերության այլ ներքին կանոնակարգերով:

2. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

2.1. Նախքան ներդրումային ծառայությունների մատուցումը և ծառայությունների մատուցման Պայմանագրի կնքումը Ընկերությունը դասակարգում է Հաճախորդներին՝ որպես պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ՝ ներդրումային ծառայություններից որևէ մեկի կամ բոլոր ծառայությունների մասով, կամ որևէ գործարքի կամ արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքների մասով:

2.2. Ընկերության կողմից Կանոնակարգ 4/07-ով սահմանված չափանիշներով Հաճախորդի նախաձեռնությամբ վերջինիս պրոֆեսիոնալ դասակարգումը վավեր համարվելու նպատակով Ընկերությունը իրականացնում է Հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ գնահատում: Հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ վերջինիս գնահատումը պետք է հավաստիացնի, որ Հաճախորդը ներդրումային ծառայություններից օգտվելու, ներդրումային որոշում կայացնելու և դրանց հետ կապված ռիսկերն ընկալելու համապատասխան ունակություն և գիտելիք ունի: Կազմակերպությունների դեպքում գիտելիքի և փորձի վերաբերյալ գնահատումն իրականացվում է կազմակերպության այն ղեկավարի, աշխատակցի կամ անձի նկատմամբ, որն իրավասու է կազմակերպության անունից գործարքներ կնքել:

2.3. Հանախորդների դասակարգման նպատակով վերջիններիս գիտելիքի և փորձի գնահատումը իրականացվում է հետևյալ ընթացակարգով.

2.3.1. Հանախորդը լրացնում է «Ճանաչիր քո հանախորդին» հարցաթերթիկը:

2.3.2. Հանախորդին պրոֆեսիոնալ դասակարգելուց առաջ «Ճանաչիր քո հանախորդին» հարցաթերթիկի «Գիտելիքների և փորձի գնահատման թեստ» բաժնի արդյունքների հիման վրա կազմվում է Ընկերության Հանախորդների սպասարկման բաժնի կողմից ստորագրված արձանագրություն: Նշված արձանագրությունը կազմվում է միայն Պրոֆեսիոնալ հանախորդ դառնալու համար դիմած ֆիզիկական/իրավաբանական անձանց համար: Հարցաթերթիկում պարունակվող յուրաքանչյուր հարց ունի պատասխանի մի քանի տարբերակ՝ գնահատման գրոյից հինգ միավորներով: Հարցաթերթիկի լրացման արդյունքներով 70% և ավելի միավոր հավաքելու դեպքում Հանախորդը դասակարգվում է որպես պրոֆեսիոնալ, հակառակ դեպքում՝ որպես ոչ պրոֆեսիոնալ:

2.3.3. Նախքան Հանախորդի հետ պայմանագրի կնքումը Ընկերությունը Հանախորդին տրամադրում է «ՀԱՃԱԽՈՐԴԻ (ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԿԱՄ ՈՉ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ) ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ» փաստաթուղթը:

2.3.4. Նախքան Հանախորդի կողմից Պրոֆեսիոնալ հանախորդ դասակարգվելը Հանախորդը գրավոր հաստատում է, որ տեղեկացված է այն մասին, որ Պրոֆեսիոնալ դասակարգվելու դեպքում գրկվում է օրենսդրական որոշակի պաշտպանվածությունից, որը գործում է ոչ պրոֆեսիոնալ հանախորդների դեպքում:

2.4. Նախքան Պրոֆեսիոնալ հանախորդների հետ լեվերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելը կամ Հանախորդին լեվերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների մասով Պրոֆեսիոնալ հանախորդ դասակարգելը Ընկերությունը Հանախորդին ծանուցում է տվյալ գործարքներին առնչվող ռիսկերի մասին: Տվյալ դեպքում Հանախորդները գրավոր հայտարարություն են ներկայացնում Ընկերությանն այն մասին, որ տեղյակ են լեվերիջով գործարքներին, այդ թվում՝ ֆորեքս գործարքներին առնչվող ռիսկերի մասին:

2.5. Հանախորդի համաձայնության դեպքում՝ Ընկերության նախաձեռնությամբ կամ Պրոֆեսիոնալ հանախորդի նախաձեռնությամբ Ընկերությանը թույլատրվում է Պրոֆեսիոնալ հանախորդին վերաբերվել որպես ոչ պրոֆեսիոնալ և տվյալ Հանախորդի նկատմամբ կիրառել ոչ պրոֆեսիոնալ հանախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջները:

2.6. Եթե պրոֆեսիոնալ համարվող հանախորդը կարծում է, որ ի վիճակի չէ գնահատել և կառավարել ներդրումային ծառայություններից կամ ներդրումներից բխող ռիսկերը, Պրոֆեսիոնալ հանախորդի պարտավորությունն է դիմել Ընկերությանը՝ իրեն որպես ոչ

պրոֆեսիոնալ հաճախորդ վերաբերվելու համար, ինչը հնարավորություն կտա օգտվել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջներից:

2.7. Պրոֆեսիոնալ հաճախորդ համարվող անձը սույն կանոնակարգի 2.5 - 2.6 կետերի համաձայն Ընկերության կողմից դասակարգվում է ոչ պրոֆեսիոնալ Ընկերության հետ կնքված Պայմանագրի հիման վրա: Պայմանագրում հստակ ամրագրվում է, թե արդյոք Հաճախորդի ոչ պրոֆեսիոնալ դասակարգումը վերաբերում է ներդրումային ծառայություններից որևէ մեկին, բոլոր ծառայություններին, որևէ գործարքին, թե արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքներին:

2.8. Կանոնակարգ 4/07-ի պահանջներին համապատասխան Հաճախորդներին պրոֆեսիոնալ դասակարգելիս գրավոր հարցում են կատարում վերջիններիս նաև որակավորված ներդրող համարվելու համաձայնության վերաբերյալ: Հաճախորդի համաձայնության դեպքում որակավորված ներդրող գրանցվելու, գրանցումից դուրս գալու, ինչպես նաև ՀՀ ԿԲ ներկայացվող պրոֆեսիոնալ կարգավիճակի դադարեցման, Պայմանագրի լուծման և այլ տեղեկատվության փոփոխությունների վերաբերյալ հետագա գործընթացը իրականացվում է Կանոնակարգ 4/07-ի և «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» կանոնակարգ 4/06-ի դրույթներին համապատասխան:

2.9. Պրոֆեսիոնալ հաճախորդները պարտավոր են Ընկերությանը տեղեկացնել այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել իրենց պրոֆեսիոնալ դասակարգման վրա: Եթե Հաճախորդի կողմից տրամադրված կամ այլ կերպ Ընկերությանը հասանելի դարձած տեղեկատվության հիման վրա Ընկերության գնահատականով Հաճախորդն այլևս չի բավարարում այն պայմաններին, որոնց հիման վրա դասակարգվել է Պրոֆեսիոնալ հաճախորդ, կամ եթե Ընկերությունը պարզում է, որ Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունները եղել են անարժանահավատ, Ընկերությունը անհապաղ դադարեցնում է Հաճախորդի պրոֆեսիոնալ դասակարգումը, որի մասին 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Հաճախորդին:

3. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ

3.1. Պայմանագրի և Ծառայությունների մատուցման շրջանակներում Կողմերի միջև ցանկացած գործառնությունների և հանձնարարականների, ինչպես նաև ցանկացած տեղեկատվության /ներառյալ՝ հաղորդագրության, փաստաթղթերի, ծանուցումների, քաղվածքների, հաշվետվությունների/ ներկայացում, փոխանցում, փոխանակում, այդ թվում ցանկացած հաղորդակցում կապված Պայմանագրից, կանոնակարգերից բխող

ցանկացած պահանջի կամ այլ հարցերի հետ /բոլորը միասին այսուհետ՝ Ծանուցում/, կատարվում է էլեկտրոնային եղանակով՝ Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեի և/կամ «ԱՎՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ Իմ հաշիվը մոդուլի միջոցով ու համաձայնեցված լեզվով, եթե այլ պարտադիր պայման նախատեսված չէ Պայմանագրով/կանոնակարգերով, և/կամ Ընկերության պաշտոնական կայքէջում հրապարակելու միջոցով:

3.2. Հաճախորդը համարվում է պատշաճ ծանուցված, երբ ծանուցումն ուղարկվել է Հաճախորդի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստին և առկա է այն ուղարկելու մասին էլեկտրոնային հավաստում, եթե նույնիսկ բացակայում է այն կարդալու մասին հավաստումը. այս դեպքում Հաճախորդը համարվում է պատշաճ ծանուցված Ընկերության կողմից ծանուցումն ուղարկելու պահից, և/կամ Իմ հաշիվը մոդուլի միջոցով, որի դեպքում հաճախորդը համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումն ուղարկելու հաջորդող օրվանից, և/կամ Ընկերության պաշտոնական կայքէջում հրապարակելու միջոցով, որի դեպքում Հաճախորդը համարվում է պատշաճ ծանուցված հրապարակման հաջորդ օրվանից: Ընդ որում, Պայմանագրով/կանոնակարգերով նախատեսված ծառայությունների մատուցման շրջանակներում բոլոր ծանուցումներն ուղարկվում են Ընկերության իրավաբանական կամ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեի և/կամ Իմ հաշիվը մոդուլի միջոցով:

3.3. Հաճախորդի կողմից էլեկտրոնային հասցե չտրամադրելու և/կամ տրամադրված էլեկտրոնային հասցեն չգործող կամ թերի լինելու դեպքում Հաճախորդի հետ հաղորդակցումը կատարվում է Իմ հաշիվը մոդուլի և/կամ Հաճախորդի կողմից տրամադրված հեռախոսահամարին կարճ հաղորդագրությամբ (sms) տեղեկացում ուղարկելու և Ընկերության գրասենյակի տարածքում այդպիսի տեղեկատվությունը առձեռն ստանալու հնարավորության մասին տեղեկացնելու միջոցով, անկախ այն հանգամանքից Հաճախորդը մոտեցել և ստացել է տեղեկատվությունը, թե՛ ոչ: Ընդ որում, Հաճախորդը գիտակցում է, որ Պայմանագրի շրջանակներում ներկայացված ցանկացած ծանուցում համարվելու է Հաճախորդի կողմից պատշաճ ստացված, անգամ եթե Հաճախորդը փաստացի չի ստացել այդ ծանուցումը Ընկերությանը տրամադրված հեռախոսահամարի թերի կամ անջատված կամ որևէ այլ պատճառով անհասանելի լինելու կամ Պայմանագրով սահմանված կարգով տվյալների թարմացման պարտավորությունը Հաճախորդի կողմից կատարված չլինելու արդյունքում սխալ հեռախոսահամարին ուղարկելու բոլոր դեպքերում:

3.4. Հաճախորդը պարտավորվում է Պայմանագրի կնքումից հետո մինչև դրա գործողության դադարեցումը Պայմանագրի վավերապայմաններում ներառված տվյալների փոփոխության մասին գրավոր տեղեկացնել Ընկերությանը փոփոխություն կատարելուց հետո 5 /հինգ / աշխատանքային օրվա ընթացքում:

3.5. Հանախորդի և Ընկերության միջև պայմանագրերը կնքվում են բնօրինակ՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով կամ Էլեկտրոնային տարբերակով: Պայմանագիրն Էլեկտրոնային եղանակով կարող է կնքվել Էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով Էլեկտրոնային հաղորդագրություն, փաստաթուղթ կամ տվյալ փոխանակելու միջոցով, այդ թվում՝ Էլեկտրոնային հարթակով (ինտերնետային կայքով, Էլեկտրոնային հավելվածով կամ համանման այլ միջոցներով) Էլեկտրոնային տվյալների փոխանակման միջոցով՝ պայմանագրի կնքմանն ուղղված հստակ գործողություն իրականացնելով: Էլեկտրոնային տարբերակով պայմանագրերը համարվում են կնքված, եթե տվյալ պայմանագիրը ստորագրվում է Ընկերության և Հանախորդի կողմից ստորագրվելուց հետո միմյանց սկանավորված տարբերակները տրամադրելով: Ընդ որում պայմանագիրը պետք է ստորագրվի միայն այն ստորագրելու իրավունք ունեցող անձի կողմից և ուղարկվի/ստացվի պայմանագրի մեջ ներառված էլ. փոստի հասցեներով:

3.6. Հանախորդներից պահանջվող տեղեկությունները՝

3.6.1. Ներդրումային ծառայությունները մատուցելու շրջանակներում Ընկերությունը Հանախորդից պահանջում է տեղեկատվություն իր կողմից մատուցվող ներդրումային ծառայության կամ արժեթղթի վերաբերյալ Հանախորդի գիտելիքների և փորձի մասին, որը հնարավորություն կտա գնահատել, թե արդյոք տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը համապատասխանում է Հանախորդի պահանջներին: Եթե Ընկերությունը Հանախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա գտնում է, որ իր կողմից մատուցվող տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը չի համապատասխանում Հանախորդի պահանջներին, ապա զգուշացնում է Հանախորդին այդ մասին:

3.6.2. Ընկերության կողմից արժեթղթերի փաթեթի կառավարման կամ արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրման դեպքում Հանախորդից տեղեկություններ պահանջելու չափանիշները կարգավորվում են տվյալ ծառայությունների մատուցումը կարգավորող Ընկերության կանոնակարգերին և Կանոնակարգ 4/07-ին համապատասխան:

3.6.3. Այն դեպքում, երբ Հանախորդը չի տրամադրում սույն Կանոնակարգի 3.6.1. կետով պահանջվող տեղեկատվությունը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, ապա Ընկերությունը զգուշացնում է Հանախորդին այն մասին, որ Հանախորդի նման վարքագիծը թույլ չի տալիս գնահատել, թե արդյոք Ընկերության կողմից մատուցվող տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը համապատասխանում է Հանախորդի պահանջներին:

3.6.4. Այն դեպքում, երբ Հանախորդը չի տրամադրում սույն Կանոնակարգի 3.6.2. կետով պահանջվող տեղեկատվությունը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն,

ապա Ընկերությունը զգուշացնում է Հաճախորդին այն մասին, որ Հաճախորդի նման վարքագիծը թույլ չի տալիս գնահատել կամ խորհուրդ տալ այնպիսի ներդրումային ծառայություններ և արժեթղթեր, որոնք առավելագույնս համապատասխանում են Հաճախորդի ցանկությանը:

3.6.5. Սույն Կանոնակարգի 3.6.1. և 3.6.2 կետերում նշված տեղեկությունները ստանալուց հետո Ընկերությունը որոշում է, թե արդյոք Հաճախորդն ունի ներդրումային գործունեության բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ և փորձ, որպեսզի հասկանա տվյալ ներդրումային ծառայությունից կամ արժեթղթից բխող ռիսկերը: Ընկերությունը համարում է, որ Պրոֆեսիոնալ հաճախորդը ունի այդ անհրաժեշտ գիտելիքները և փորձը:

3.6.6. Ընկերությունը հիմնվում է Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունների վրա, բացառությամբ եթե գիտեր կամ կարող էր իմանալ, որ տեղեկատվությունն ակնհայտորեն հնացած է, ոչ ճշգրիտ կամ ոչ լիարժեք:

3.7. Մինչև Ընկերության կողմից մատուցվող որևէ ծառայության վերաբերյալ Հաճախորդի հետ համապատասխան Պայմանագիր կնքելը Հաճախորդը ծանոթանում է Ընկերության բոլոր կանոնակարգերին և բոլոր ներքին իրավական ակտերին, որոնք տեղադրված են Ընկերության կայքում: Հաճախորդի հետ համապատասխան ծառայության մատուցման պայմանագրում գրավոր նշվում է այն մասին, որ Հաճախորդը ծանոթ է Ընկերության կողմից մշակված և հաստատված տվյալ ծառայության մատուցումը կարգավորող կանոնակարգերին, այլ ներքին ակտերին, փաստաթղթերին, և Սակագներին:

3.8. Ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում Հաճախորդի հետ տեղեկատվության փոխանակման և հաղորդակցման դրույթները ամրագրված են սույն Կանոնակարգով և Ընկերության մյուս ներքին իրավական ակտերով: Ընդ որում սույն Կանոնակարգի և այլ ներքին իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում նախապատվությունը տրվում է տվյալ հարաբերությունը կարգավորող ներքին իրավական ակտին:

4. ԵԶՐԱՓՈԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն Կանոնակարգի բոլոր լրացումներն ու փոփոխությունները հաստատվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից (եթե Ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ) և ուժի մեջ են մտնում Ժողովի կողմից հաստատման պահից: